106 Երբ մեղքերով էի մեռած,

1. Երբ մեղքերով էի մեռած,
Սիրտս ալ՝ մեջը մութին,
Իր խոսքովն լույս տվավ Աստված.
Արդ մեջս Քրիստոս կապրի:

Մեջս կապրի Քրիստոս, (2)
Ո՜հ, այս ի՜նչ մեծ փրկություն,
Որ մեջս կապրի Քրիստոս:

2. Արեգակի շողերն ինչպես
Կյանք տան ծաղկանց երկրի,
Լույս, կյանք, սեր ինձ տվավ այնպես
Քրիստոս, որ մեջս կապրի:

3. Ծաղիկն սերմին մեջ է պահված,
Եվ կյանքն՝ հսկա ծառի,
Նույնպես օրհնյալ ըլլա Աստված,
Հոգին իմ մեջս կապրի:

4. Ապրելու միշտ Իրեն նման
Սիրտս կարոտով վառի,
Խորհուրդներս ինձ ցնծում կուտան,
Որ մեջս Քրիստոս կապրի: